ՆԻՆԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ նոր և նորագույն շրջանի
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 821.19.0

ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆԸ ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. ժամանակ, նժույգներ, ձևաչափ, կատարյալն ու անշոշափելին, հիշողության քարանձավներ, գույնի զգացողություն, թռչուններ, սարդոստայն, ապրված պահեր, լաբիրինթոս:

Ключевые слова и выражения: время, кони, формат, совершенное и неосязаемое, пещера воспоминаний, ощущение цвета, птицы, паутина, пережитые моменты, лабиринт.

Key words and expressions: time, courser/palfery, format, perfection and untangible, memory of caves, birds, feeling of color, cobweb, living moments, labyrinth.

1960-ական թվականներին գրականություն եկած բանաստեղծների մասին Ալ. Թոփչյանը գրում է. «Այսօր արդեն ոչ մի կասկած լինել չի կարող, որ 60-ական թվականների երկրորդ կեսից ասպարեզ եկած բանաստեղծական սերունդը Սևակի տեսական կանխատեսումների իրականացումն էր և իրականացնողը: Սլավիկ Չիլոյանը, Հովհաննես Գրիգորյանը, Հենրիկ Էդոյանը, Արտեմ Հարությունյանը, Էդվարդ Միլիտոնյանը զբաղված էին ոչ թե սևակյան տողերի պատճենավորումներով ու տիրաժավորումով, ինչպես արեցին ոմանք ու անհետ կորան, այլ փորձում էին իրենց անհատականությունը միացնել միանգամից նորոգված գրական մթնոլորտին»[1]:

Պ. Սևակը խրախուսում էր նորերի համարձակ որոնումները. «Ամենաուրախալին, ըստ իս, այն է, որ այս սերունդը բերում է (և չէր էլ կարող չբերել) թարմություն: Թարմություն և ոչ թե նորություն, որը (այդ նորությունը) զուտ պայմանական մի հասկացություն է՝ լուսնի տակ ոչինչ նոր չկա: Մեր երիտասարդությունն ազատագրվել է գրական նախապաշարումներից, որ այլ բան չէ, քան կամավոր գերություն, իսկ սա

[1] Թոփչյան Ալ., Գրականագիտական հոդվածներ, Երևան, 1988, էջ 12:

գերության վատթարագույն տեսակն է»[2]: Մեծ բանաստեղծը խրախուսում էր երիտասարդների համարձակ որոնումներն ու ինքնավստահությունը և քննադատում Ալ. Թոփչյանի ակնարկած «ոմանց» մեծամտությունը, «հանճարացավը», անցյալի մշակույթը «թաց սպունգը ձեռքն առած» աշակերտի ջանասիրությունը «մի վայրկյանում ջնջելու» ջանքերը: Երիտասարդների ինքնավստահության մեջ «ոչ մի պախարակելի բան չկա: Պախարակելին և վտանգավորը սկսվում է կես քայլ հետո, երբ հանդես է գալիս մեծամտությունը»[3]: Այդ «ոմանց» Պ. Սևակը խորհուրդ էր տալիս միշտ հիշել, որ «գրական ամեն նոր սերունդ աշխարհ գալիս մտնում է մի տեսակ շախմատային խաղի մեջ և նույնիսկ ակամա «շախ» է ասում նախորդ սերնդին: Այդպես եղել է, այդպես լինելու է: Բայց նույնքան էլ ճիշտ է, որ «շախ»-ի ամեն մի հայտարարություն ոչ միայն չի վերջանում «մատ»-ով, այլև հաճախ տալիս է հակառակ արդյունք»[4]: Խորհուրդ է տալիս նաև հիշել, որ «արվեստագետին ոչ այնքան հայելի է պետք, որքան ապակեպատ լուսամուտ, որպեսզի անդրադարձնի ոչ թե սեփական դեմքը, այլ ցույց տա աշխարհը»[5]:

Ստեղծագործական առաջին իսկ քայլերից Արմեն Մարտիրոսյանը ճշգրտում է կողմնորոշման իր չափանիշները, փորձում համադրել արևմտյան և ռուս նորագույն շրջանի ու հայ դասական գրականությունների ավանդույթներն ու փորձը, ոչ թե արհեստականորեն մեր գրականություն ներմուծել եվրոպական նորագույն շրջանի բանաստեղծների ոճերն ու լեզվամտածողության տարրերը, այլ հստակեցնել աշխարհընկալման սեփական տեսանկյունը, գտնել վեպի ճշմարիտ պոեզիա տանող ճանապարհը, ստեղծել բանաստեղծության իր մոդելը: Երիտասարդ բանաստեղծը շատերի պես չեր տառապում «հանճարացավով» և հոգևոր սնունդ էր ստանում հայ և համաշխարհային գրականությունների անսպառ գրադարանից. «Ես մանկությունից ի վեր սնվել եմ և՛ հայ, և՛ համաշխարհային դասական գրականության բարձրագույն արժեքներով՝ անկախ նրա տարատեսակներից ու արտահայտման բազմապիսի եղանակներից: Սուրբ հոգևոր սնունդը մեծապես նպաստել է բառերի ու պատկերների ուժեղ և ներգործող դաշտի հանդեպ իմ՝ գրեթե սրբագործված վերաբերմունքին»[6]:

---

[2] Սևակ Պ., Երկերի ժողովածու 3 հատորով, հ 3, Երևան, 1983, էջ 203:
[3] Նույն տեղում, էջ 204:
[4] Նույն տեղում, էջ 228:
[5] Նույն տեղում, էջ 227:
[6] Մարտիրոսյան Ա., Ներկայում հանգրվանող անցյալ, Երևան, 2010, էջ 191:

Իր ուսուցիչների շարքում Ա. Մարտիրոսյանը նշում է Ու. Ուիթմենին, Գ. Լորկային, Բասիոյին, Մայակովսկուն, Ս. Եսենինին, հատկապես՝ Գ. Նարեկացուն, Ն. Քուչակին, միջնադարյան տաղերգուներին, որոնք «այսօր էլ մեր նորօրյա գրականության ուղեկիցներն են», Պ. Դուրյանին, Մ. Մեծարենցին, Սիամանթոյին, Դ. Վարուժանին, Հովհ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին, Ե. Չարենցին, Պ. Սևակին, որոնց շնորհիվ երիտասարդ բանաստեղծի մոտ տարիների ընթացքում համոզմունք է դարձել, որ «պոեզիան Աստծո ընտրյալն է, հետևաբար՝ այնտեղ, ուր Երկնային արքայությունն է, ոտք դնողը զուտ ոգեղենիկ է լինելու մարմնական կշռից ու ցանկությունից ազատված»[7]:

Բանաստեղծը համոզված էր, որ, առանց դասականը խորությամբ իմանալու, առանց նրա խոր նստվածքների, անհնարին է գտնել ինքնահաստատման չտրորված ճանապարհներ: Դասականների փորձն ընդլայնում է երիտասարդ բանաստեղծների մտահորիզոնը, սրում ժամանակի զգացողությունը, մշակում աշխարհընկալման թարմ եղանակներ ու մեթոդներ:

Իր բոլոր ստեղծագործություններում Ա. Մարտիրոսյանն ինքն է, իր «էության այս կամ այն բեկորը», և նրա յուրաքանչյուր ժողովածու, բանաստեղծական շարք իր «անցած ճանապարհի մի հատվածն է», իսկ յուրաքանչյուր բանաստեղծություն «ապակեպատ լուսամուտ», որտեղից բանաստեղծը նայում է աշխարհին, հետևում ժամանակի հարափոփոխ ընթացքին, տարածական նոր սահմաններում տեսնում աստվածաշնչյան միֆական խորհրդանիշները, փորձում հետ տանել «վարագույրը գաղտնիքի», հաղորդակցվել «կատարյալին ու անշոշափելիին».

Եվ մենք շարժվում ենք՝
Տանելու ծառը մեր հայացքի
Դեպի կատարյալը և անշոշափելին,
Դեպի կատարյալը և բանաստեղծությունը
Դեպի կատարյալը և սկիզբը,
Որտեղ գաղտնիքն է ամենայնի[8]:

«Կատարյալն ու անշոշափելին» բանաստեղծը որոնում է ժամանակի անցյալ-ներկա-ապագա զուգահեռներում: Անցյալը ներկայանում է որպես <<մագաղաթյա սրբության փոքրիկ ու խունացած մի թերթ>>, որի վրա հնում հիսուսներ են խաչվել:

[7] Նույն տեղում, էջ 84:
[8] Մարտիրոսյան Ա., Թռչուններ, Երևան, 1978:

Հիմա իմ աչքերը, ներկան, որպես <<սարդոստայն>>, որի մեջ հայտնված անհատի համար խիստ ցավալի է, որ նյութը կաղապարել է ամեն ինչ, մարդկությունը հեռացրել իր մանկությունից: <<Կատարյալն ու անշոշափելին>> սարդոստայնում մոլորված բանաստեղծին հայտնվում են հիշողության <<մթին քարանձավներում>>, ուր՝

Տանը՝ պատերից,
Դեղին շրջանակներում կախվել են
Ծնողների դիմանկարները,
Եվ գրվել են նրանց անունները:
Ծնողներն ապրում են դեղին շրջանակում
Եվ իրենց հիշողության քարե խորունկ քարանձավում
Պահում են երեխաներին[9]:

«Հիշողության լաբիրինթոսում» ավարտվում են գալիք վայրկյանները, հիշողության ծալքերում արթնանում են կյանքի ապրված ու չապրված պահերը, և աշխարհը լցվում է օրորոցներով: Հիշողության <<թռչող գորգերի վրա>> թափվում են <<դեղին, կարմիր>> գույներով երիզված ժապավեններ, և հնչում է լինելության երգը.

«Եղիր»,- ասում են արևածաղկի մեղուները,
«Եղիր»,- կրկնում են երեխաները,
Եվ աստվածներն ասում են՝
«Եղիր»[10]:

Դասական գրականությունից մեզ ծանոթ մոտիվներով գրված բանաստեղծություններում ձայները երևակվում են տարբեր երանգներով, դեղինն ու կարմիրը երիզվում են կապույտ նրբաթելերով: Երեխաները <<մեկ-մեկ շոշափում են արցունքների անգունությունը>> և ասում են,

Որ դրանք իրենց առաջին խանձարուրներն են
Եվ իրենց վերջին հագուստները,
Եվ արցունքների անգունությունը շոշափելիս
Նրանց մեջ ծնվում է
Նույնի զգացողությունը:
Ձայները (կարմիր, դեղին, կապույտ)
Նախապես նման են արցունքների[11]:

Իր բոլոր ժողովածուներում Ա. Մարտիրոսյանը չի վիճարկում բանաստեղծության վերաբերյալ պատկերացումները, չի ըմբոստանում և

[9] Մարտիրոսյան Ա., Բանաստեղծություններ, Երևան, 1973, էջ 69:
[10] Նույն տեղում, էջ 66:
[11] Նույն տեղում, էջ 71:

ընդվզում <<հայրերի>> դեմ: Ընդհակառակը՝ շարունակելով Նարեկացուց, Քուչակից, միջնադարյան տաղերգուներից սկիզբ առնող մեր պոեզիայի մայր երակը, նա պահպանում է դասական բանաստեղծության կառուցվածքային առանձնահատկությունները, ռիթմերը: Միաժամանակ նա աշխատում է չգրել այնպես, ինչպես <<հայրերն>> են գրել, որովհետև գեղարվեստական փորձի յուրացման նոր եղանակներն ու մեթոդները, որոնք դրսևորվում են մետաֆորային համադրումներով, բառիմաստի ներքին դինամիկայով, առաջարկում են ժամանակակից աշխարհի ռիթմերի յուրահատուկ լուծումներ:

Ժողովածուից ժողովածու իրականության հետ փոխհարաբերությունների ձևաչափերը վերափոխվում են նոր հարթություն, ընդլայնվում են բանաստեղծության ներքին տարածությունը, նորովի են իմաստավորվում բանաստեղծի ու ժամանակի հարաբերությունները: Մեզ շրջապատող ծանոթ առարկաները հանդես են բերում նոր հատկանիշներ:

Տարածության ու ժամանակի մեջ բանաստեղծը գնում է դեպի նախաստեղծ Սկիզբը, փնտրում է իրեն, <<թղթերի վրա բառերով նկարում է իրեն>>, ու հյուսվում է մի հրաշք պատմություն.

Ապրած պահերը լուռ օրորվում են
Ժամանակի գալիք նժույգների վրա,
Տարածության գալիք ճամփաներում:
Եվ օրորում են ժամանակը,
Եվ տարածությունը օրորում են:
Եվ ժամանակի գալիք նժույգները
Տարածության գալիք ճամփաների միջով
Իրենց հետ տանում են
Ապրած պահերի օրորոցները,
Եվ աշխարհը լցվում է օրորոցներով[12]:

1978 թվականին Ա. Մարտիրոսյանը հրատարակեց <<թռչուններ>>, 1982-ին՝ <<Մեր սիրո երկիրը>> ժողովածուները, որոնք նոր հանգրվաններ էին բանաստեղծական որոնումների նրա ճանապարհին: Ժողովածուների բանաստեղծություններում ի հայտ են գալիս տոնային նոր նրբերանգներ, հնչյունային նոր ելևէջներ, գերիշխում են լուսավոր ու պայծառ ձայները.

Օրվա պահերին
դեռ չլվացված բառեր է փնտրում
լուսաբացի չուն.
և լվանալու համար երևի՝

[12] Նույն տեղում, էջ 67-68:

վարդաջրեր է կտուցով տանում
և արեգակ է կտցում երկնքում
մի փոքրիկ թռչուն[13]:

Ժողովածուներն աչքի են ընկնում հետաքրքիր, թարմ պատկերամտածողությամբ. Թռչունների կարմիր թևերի տակ բոցկլտում է մայրամուտի կարմիր բոցը, անակնկալ մի կարոտի թրթիռներ են տարածվում օդում, աշնան քամին հունձ է անում դեղին անսահմանության մեջ, հնձվորների աչքերում տերևների անապատն է, ճյուղերի խեղճ…

Երկու տերև, թռչուն
մահվան տագնապը հիշելով՝
աշնան հերկից դուրս են թռչում
գարնան ծիծղուն վերհուշներով:
Եվ թևերին նրանց՝ աղոթք,
և ծիլ-ծփանք գարնան սյուքի,
այդպես լույսն է բացվում շաղոտ
նման թափվող արտասուքի[14]:

Ուշագրավ են ձայնային երանգավորումները.

<< Խաղաղ դաշտում կանաչ գետերն արթնացումի
Խմորվում են երկունքի մեջ ազատության>>…,

<<ինքն իրեն կտցահարող մի փայտփորիկ>> փնտրում է <<ազատ շարժման ստվեր ու գիծ>>:

Իսկ շարժման խորքում՝
տարածության գծերը բացող
և օդ ազատ, և սերմացու մի փայտփորիկ,
և մաշկը քո՝ գծերի մեջ շողշողացող:
Մարմնի մեջ, ինչպես ձկնիկ, սաղմն է լողում,
Որ սերմացու կյանքդ նորից պահես հողում,
իբրև փոքրիկ մի փայտփորիկ կտցահարող[15]:

Մարդը թռչունի պես ազատ ճախրելու կարիք է զգում ձկնիկի պես ծավի ծփանքում սուզվելու, երկնային արքայությանը մերձենալու կարիք: Սերտ մերձեցումից <<իրական է դառնում հեքիաթը, որտեղ ասված է, թե բոլոր աստղերն ու արեգակը թափառող թռչուններ են>>:

Բնության ձայները, թռչունների ճախրանքը, ձկների ներսուզումը կապույտ անսահմանության մեջ, գարնան հրճվանքը, աշնան թախիծն ու

[13] Մարտիրոսյան Ա., Թռչուններ, Երևան, 1978, էջ 99:
[14] Նույն տեղում, էջ 104:
[15] Նույն տեղում, էջ 105:

ձմռան անսահման մաքրությունը Աստծուն մերձենալու, հողին ծնկադիր աղոթելու ցանկությամբ են լցնում մարդու հոգին, մղում փառաբանության.

Փառաբանիր,
որպես գութան և որպես խոփ՝
քո շուրթերը հերկող սերը
և գիշերը փառաբանիր,
որ ճամփա է գնում խաղաղ
կաթիլ-կաթիլ վարարելու
և սառչում է մի ակնթարթ
սառը-սառույց մի առավոտ
և արեգակ քո շուրթերին արարելու[16]:

Ավանդականի ու նորարականի համադրման փորձերն իրենց հետաքրքիր դրսևորումներն ունեցան «Միջնադարի առավոտը» շարքում «Շարակնոց» ժողովածուում:

Ն. Սարգսյան

Ավանդականն ու նորարարականը Արմեն Մարտիրոսյանի պոեզիայում

Ամփոփում

Հոդվածում քննարկվում են Ա. Մարտիրոսյանի պոեզիայի դասական ավանդույթների ու բանաստեղծական համարձակ և ուշագրավ որոնումների դրսևորումները: Մասնավորապես նշվում է, որ հեղինակը, չկտրվելով պոեզիայի ազգային արմատներից ու ստեղծագործաբար յուրացնելով ռուս և եվրոպական նորագույն շրջանի գրականությունների փորձը, ստեղծում է բանաստեղծական իր ինքնատիպ մոդելը:

Н. Саргсян

Традиционное и новаторское в поэзии А.Мартиросяна

Резюме

В статье обсуждаются проявления классических традиций поэзии и смелых и примечательных поэтических исканий.В частности, отмечается,что автор,не отделяясь от национальных корней поэзии и творчески осваивая опыт русской и европейской литературы нового времени,создает свою поэтическую оригинальную модель.

[16] Նույն տեղում, էջ 101:

N. Sargsyan

Traditional and innovative in A. Martirosyan's poetry

Summary

In the article discusses classical traditions of Martirosyans poetry and manifestations of bold and remarkable poetic searches.

In particular, it is noted that the author creates his original poetic model without leaving the national roots of poetry and creatively mastering the experience of Russian and European modern literature.